

ՕՈՒՆ-ԵՐԻ ԴԵՐԸ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ԿԱԵ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Անցումային շրջանը հետխորհրդային տարածքում, որը սկսվել էր ԽՍՀՄ կազմալուծումից հետո, սկզբնական շրջանում ԿԱԵ երկրներին բերեց տնտեսական լուրջ կորուստներ, ինչը հետևանք էր միացյալ տնտեսական տարածության կենտրոնացված համակարգի փլուզման: 1989-1993թթ. ԿԱԵ երկրներում ՀՆԱ-ն նվազել էր 20%, իսկ արդյունաբերության ծավալները՝ 2 անգամ¹:

ԵՄ մտնելու ուղու մասին հռչակելուց հետո, ԿԱԵ երկրները² 1990թ. երկրորդ կեսին կարողացան լրջորեն տեղաշարժվել եվրոինտեգրացման փոխհարաբերություններում, հասնել նոր տեխնոլոգիական ոլորտի ձևավորման մեջ որոշակի արդյունքների, որոնք համեմատելի են արևմտաեվրոպական համակարգերի կառավարման հետ:

Դեպի արևմուտք ուղղված փոխհարաբերություններում փոփոխությունները նկատելի չէին լինի առանց ԿԱԵ երկրների համապատասխան քաղաքականության, որն ուղղված է ձևավորելու բարենպաստ ներդրումային մթնոլորտ, ինչպես նաև առանց օտարերկրյա ներդրողների, որոնց դերը զգալի է տվյալ տարածքի տնտեսական զարգացման հարցում: Նրանց օգնությամբ, առաջին հերթին տվյալ տարածաշրջանում վերազգային կորպորացիաների գործունեության շրջանակներում, սկսվեց արևելաեվրոպական երկրների դեպի զուրալ տնտեսություն ներքաշելու ակտիվ գործընթաց, որն ուղեկցվում էր ներդրումների, արտահանման պոտենցիալի մեծացմամբ, տեխնոլոգիաների, «նոր հաու»-ների և կառավարչական ծառայությունների փոխանցման ակտիվացմամբ:

Վերակառուցման և պետական գույքի մասնավորեցման արդյունքում, որն արագացնում էր օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքը, ԿԱԵ համեմատաբար ավելի զարգացած երկրների արդյունաբերությունը կարողացավ մինչև 2000թ. մասնակիորեն վերականգնել իր մինչ բարեփոխումային դիրքերը: Արդյունաբերական արտադրանքի ծավալը այդ ժամանակահատվածում մեծացել է Հունգարիայում 1.7, Լեհաստանում 1.5, Սլովակիայում 1.1 անգամ³:

ԿԱԵ երկրների տնտեսական ակտիվությունը արտաքին շուկայում ընթացել է արտահանվող ապրանքների համակարգի վերակողմնորոշմամբ, որն ակնհայտորեն երևում է արտահանվող ապրանքների կազմում տեխնոլոգիական ապրանքների ծավալների աճով և հումքային ապրանքների ծավալի նվազմամբ: Այսպես, Հունգարիայում արտահանման մեջ տեխնոլոգիական ապրանքների բաժինը նվազել է մինչև 4%, ինչը 5 անգամ փոքր է 1990թ. ցուցանիշից: Միաժամանակ աճել է ոչ հումքային ապրանքների քանակը արտահանման մեջ (հատկապես տեխնոլոգիատար ապրանքների), որը կազմել է 2001թ. 63% (այս ցուցանիշը աճել է 6 անգամ): Համապատասխան ցուցանիշներ տեխնոլոգիական ապրանքների ծավալի արտահանման մեջ ունեն Չեխիան՝ 46%, Սլովենիան՝ 41%, Լեհաստանը՝ 30%⁴:

Համապատասխանաբար ԿԱԵ երկրների շուկան բացվել է արևմտյան տեխնոլոգիաների համար: Այդ շուկա ԵՄ-ից արտահանվող ապրանքների 42% կազմում են մեքենաներն ու սարքավորումները: Արևելյան Եվրոպայի համար նման հատկացումների դերը տնտեսության կատարելագործման հարցում դժվար է չգնահատել, հատկապես այն պատճառով, որ դրանք ուղղորդվում են կապիտալի լայնածավալ հոսքով: Ընդհանուր առմամբ կապիտալ ներդրումների 70%-ը, որոնք ուղղվում են ԿԱԵ երկրների տնտեսությունների վերակառուցման համար ստացվում են ԵՄ-ից⁵:

Վերջին շրջանում ԿԱԵ առաջատար երկրներում տեղի են ունենում օտարերկրյա ուղղակի ներդրումների կառուցվածքի որակական փոփոխություններ: Վերազգային կորպորացիաները սկսել են փոխանցել այս երկրներ արտադրատնտեսական ցիկլի ավելի բարձր օղակներ (իրացում, մարքեթինգ, ԳՀՓԿԱ), որոնք պահանջում են բարձրակարգ ճարտարագետների և գիտական կադրերի առկայություն: Այս կապակցությամբ Հունգարիան ավելացրել է կրթության վրա կատարված ծախսերը, որը կազմում է Հունգարիայի պետական բյուջեի 11%: Եթե մի քանի տարի առաջ բարձրագույն կրթություն էր ստանում հունգարական երիտասարդների 8%, ապա 2004թ. արդեն՝ 33-34%⁶:

ՕՈՒՆ-երը իրականացնում են կարևոր ֆունկցիա ԿԱԵ երկրների տնտեսական զարգացման ռազմավարության մեջ, համարվելով կապիտալի ներհոսքի, առաջատար տեխնոլոգիաների և արտաքին շուկայում մրցունակության բարձրացման կարևոր գործոն:

¹ Власкин Г.А., Ленчук Е.Б. "Промышленная политика в условиях перехода к инновационной экономике", М., Наука, 2006, стр. 56

² ԵՄ մտնելու մասին Հունգարիան և Լեհաստանը հայտ են ներկայացրել 1994թ., Ռումինիան, Սլովակիան և Բուլղարիան 1995թ., Չեխիան և Սլովենիան 1996թ.

³ Власкин Г.А., Ленчук Е.Б. "Промышленная политика в условиях перехода к инновационной экономике", М., Наука, 2006, стр. 59

⁴ Страны ЦВЕ на пути в Евросоюз. М., Наука, 2002, стр.39

⁵ Власкин Г.А., Ленчук Е.Б. "Промышленная политика в условиях перехода к инновационной экономике", М., Наука, 2006, стр. 60

⁶ European Innovation Scoreboard.2004// Comparative Analysis of Innovation Performance. Commission Staff Working Paper. Brussels, 2004. 19 November

Վերջին տարիներին ԿԱԵ երկրների արտաքին առևտրի ազատականացումը և ԵՄ անդամակցումը ներգրավեց մեծ չափերի կապիտալ Արևելյան, Հարավ-Արևելյան Ասիայից և Ճապոնիայից, որոնք ձգտում էին մեծացնել իրենց ազդեցության ոլորտը մաս Եվրոպական շուկայում: Ընդհանուր առմամբ օտարերկրյա ընկերությունները 2003թ. ներդրել են ԿԱԵ երկրների տնտեսությունների մեջ 162.5 մլրդ. դոլար (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ԿԱԵ երկրների մասնակցությունը կապիտալի համաշխարհային շրջապտույտին⁸

Ցուցանիշ	1990թ.	1996թ.	2000թ.	2002թ.
Համաշխարհային ցուցանիշներ				
ՕՈՒՆ-երի հոսքը, մլրդ. դոլար	209	393	1393	651
համաշխարհային ՀՆԱ-ում ՕՈՒՆ-երի բաժինը, %	0.9	1.3	3.6	2
Տարածաշրջանային ցուցանիշներ				
ԿԱԵ երկրներ				
ՕՈՒՆ-երի հոսքը, մլրդ. դոլար	0.5	9.6	21.6	39
ԿԱԵ երկրների ՀՆԱ-ում ՕՈՒՆ-երի բաժինը, %	0.1	2.6	5.7	6.8
Ներկրված ՕՈՒՆ-երի գումարային ծավալը, մլրդ. դոլար	0.75	41.4	99.2	162.5

ԿԱԵ երկրներում հիմնական ներդրողներ են համարվում Գերմանիան (որին բաժին է ընկնում կապիտալ ներդրումների 40%), Ֆրանսիան, Հոլանդիան և Ավստրիան: ՕՈՒՆ-երի զգալի մասը 1990-2002թթ. ուղղվել է Լեհաստան, Չեխիա և Հունգարիա: Վերջին շրջանում աճել է ներդրումների հոսքը Հարավ-Արևելյան Եվրոպա՝ Ռումինիա, Խորվաթիա, Սակեդոնիա (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ԿԱԵ երկրներում կատարված օտարերկրյա ներդրումներ⁹

Երկիր	ՀՆԱ-ի աճի տեմպեր, %			ՕՈՒՆ-երի հոսքը, մլն. դոլար		
	2000թ.	2001թ.	2002թ.	2000թ.	2001թ.	2002թ.
Հունգարիա	5.2	3.8	4	1107	2204	1502
Լեհաստան	4	1.1	1.5	8171	6502	7000
Սլովակիա	2.2	3.3	3.5	2058	1500	3500
Սլովենիա	4.6	3	3	110	338	131
Խորվաթիա	3.7	4.1	3.5	827	470	1090
Չեխիա	2.9	3.6	3.5	4477	4820	7000
Բուլղարիա	5.8	4.5	3.5	150	164	200
Բոսնիա և Հերցեգովինա	5.9	5.6	5	1003	641	900
Սակեդոնիա	4.6	4.6	3	175	445	70
Ռումինիա	1.8	5.3	3.5	1051	1154	1269
Հարավսլավիա	5	5.5	5	25	120	300

ՕՈՒՆ-երի ներթափանցման մակարդակը այդ երկրների տնտեսությունների բավականին բարձր է, հատկապես Չեխիայում (52%), Հունգարիայում (44%), Սլովակիայում (40%): Ըստ հունգարական վիճակագրության 2004թ. մեկ անձին բաժին ընկնող ստացված օտարերկրյա կապիտալը կազմում է Հունգարիայի համար 4800 եվրո/մարդ, Չեխիայում՝ 4120 եվրո/մարդ, Սլովակիայում՝ 1950 եվրո/մարդ, Լեհաստանում՝ 1230 եվրո/մարդ, Բուլղարիայում՝ 740 եվրո/մարդ և Ռումինիայում՝ 600 եվրո/մարդ⁷: ՕՈՒՆ-երի 40%-ը բաժին է ընկնում վերամշակող արդյունաբերությանը, այդ առումով հեռանկարային ոլորտ է մաս բանկային, հեռահաղորդակցման ոլորտները և ապառիկ առևտուրը:

Խոշոր օտարերկրյա ներդրումային ընկերություններից, որոնք գործում են ԿԱԵ շուկայում, արդյունաբերության մեջ զգալի ներդրումներ են կատարել այնպիսի հայտնի վերագրային կորպորացիաներ (ՎԱԿ), ինչպիսիք են «Opel», «Volkswagen», «Audi», «Toyota», «Daewoo», «General Motors», «Nokia», «Philips», «Bosh», «IBM», «Hewlett Packard», «General Electric», «Electronics», «Ford», «Suzuki», «Sony», «Sanyo», «Electrolux» և այլն:

Օտարերկրյա ներդրողների համար ԿԱԵ երկրների արդյունաբերական ոլորտներից հեռանկարային են այն ոլորտները, որոնք կապված են իրացման նոր շուկաների գրավման և արտադրման նվազագույն ծախսերով պայմանավորված լրացուցիչ շահույթի ստացման հետ: Այդպիսի ակնհայտ օրինակ է Լեհաստանի, Չեխիայի և Հունգարիայի ավտոմոբիլային արտադրության մեջ արված ներդրումները: Համաշխարհային առաջատար երկրները ներդրել են Լեհաստանի և Հունգարիայի ավտոմոբիլային արտադրության մեջ համապատասխանաբար 4 և 1.4 մլրդ. դոլար: Վերջին շրջանում իր տեմպերով սկսել է առաջատար դիրքեր գրավել Չեխիան, որտեղ օտարերկրյա ներդրումների հիմքի վրա ստեղծվել է ավտոմեքենաների և նրա առանձին մասերի հավաքմամբ զբաղվող 120 ընկերություն:

⁸ Обзор ЕБРР // БИКИ, 2002, 20 июня

⁹ Նույն տեղում

⁷ Бюллетень экономической информации Торгпредства РФ в Венгрии. 2005, N7-8, стр. 10

ԿԱԵ երկրներում զարգացած երկրներից հետ մնացած ոլորտների աշխուժացման և զարգացման լավ օրինակ է կապի, ինչպես նաև համակարգչային և տեղեկատվական սարքավորումների ոլորտը: Այստեղ միանգամից լուծվել են երկու բարդ խնդիրներ՝ ծառայությունների մատուցման մեջ պետական մենաշնորհի հաղթահարում, նախ և առաջ հեռուստատեսային և հեռահաղորդակցման կապի ոլորտում, և սարքավորումների արտադրման հարցում անցում դեպի արևմտյան ստանդարտներ:

Այսպես, ամհատական համակարգիչներ արտադրող աշխարհի խոշորագույն ամերիկյան «Compaq» ընկերությունը տեղափոխել է իր հիմնական հավաքման արտադրությունը Շոտլանդիայից Չեխիա (ք. Ռուդնե): Դա նշանակում է, որ արդեն երկու տարի անց Եվրոպայում, Մերձավոր Արևելքում կամ Աֆրիկայում վաճառված յուրաքանչյուր երկրորդ «Compaq» համակարգիչը հավաքված կլինի Չեխիայում:

Միաժամանակ բարձր տեմպերով աճում է ռադիոհեռուստատեսային և հաշվիչ-էլեկտրոնային տեխնիկայի արտադրությունը:

Օտարերկրյա ընկերությունների մոտ աճում է հետաքրքրությունը ԿԱԵ երկրների նավթաքիմիական արդյունաբերության վերագիմման հարցում: Այսպես հայտնի ամերիկյան «Eastman Chemical» ընկերության կողմից 1999թ. ձեռք է բերվել չեխական «Chemické Zavody Sokolov» ընկերությունը, որն այսօր աշխատում է ամբողջ Եվրոպայի տարածքով մեկ միասնական լոգիստիկ շղթայով և թողարկում է հումք պլաստմասսաների համար:

Համանման գործընթացներ են տեղի ունենում տնտեսության այլ ոլորտներում ևս, մասնավորապես դեղագործական, սննդամթերքի արտադրության, ծխախոտի և մույնիսկ պաշտպանական արդյունաբերությունում (Լեհաստանում), կենցաղային տեխնիկայի արտադրության և նավաշինության ոլորտներում:

Այս ոլորտներից յուրաքանչյուրը մի շարք երկրներում վերագիմվել և կատարելագործվել է տեխնոլոգիական տրանսֆերտների և ՕՌԻՆ-երի միջոցով:

Չնայած ՕՌԻՆ-երի ավելացող ծավալներին, այդ միջոցները բավարար չեն մեծածավալ կառուցվածքային վերափոխումներ անցկացնելու համար: Նույնիսկ այնպիսի երկրներում, որտեղ հաջողվել է եապես ավելացնել կապիտալ ներդրումների չափերը, հիմնական ֆոնդերի տեխնիկա-տեխնոլոգիական մակարդակը չի համապատասխանում ներկա տնտեսական պայմաններին: Այսպես, 2003թ. Լեհաստանում ՕՌԻՆ-երի ծավալը կազմել է 6.4 մլրդ. դոլար: Սա 360 մլն. դոլարով ավել է 2002թ. ցուցանիշից: Իսկ ընդհանուր առմամբ 1989թ. սկսած կապիտալ ներդրումները աճել են 2 անգամ և կազմել են 72.2 մլրդ. դոլար: Այնուամենայնիվ, ըստ Վիճակագրական Գլխավոր Վարչության գնահատման Լեհաստանում հիմնական ֆոնդերի կառուցվածքը մոտ է 30 տարի առաջվա մակարդակին: Ֆոնդերի միայն 40%-ն է զբաղված տնտեսության այնպիսի ոլորտներում, որտեղ արտադրվում է վերամշակման բարձր մակարդակ պահանջող արտադրանք, իսկ այն ապրանքների արտադրության ոլորտում, որը համապատասխանում է գիտատեխնիկական առաջընթացի պայմաններին, զբաղված է ֆոնդերի 5-10%¹⁰:

Նման պայմաններում ԿԱԵ երկրներում ՕՌԻՆ-երը ազգային արտադրության և արտահանման հիմնական շարժիչ ուժն են և այլ բան չի մնում քան բարձրացնել ներդրումային գրավչությունը, ներառվող ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և աշխատանքի արտադրողականության աճը:

Ինչպես ցույց է տալիս փորձը, իրապես ազդել մոր արտադրական կառուցվածքների ձևավորման քաղաքականությանը ԿԱԵ երկրները չեն կարողացել: ՎԱԿ-երը իրենց ներդրման օբյեկտ են ընտրում առանց հաշվի առնելու այդ երկրների կառավարությունների մշակած ազգային արդյունաբերության կամ մորարարական քաղաքականությունները: Նրանք առաջնորդվում են առաջին հերթին իրացման մոր շուկաների գրավման, ըստ ոլորտների մասնագիտացման հնարավորությունների օպտիմալ օգտագործման ձգտումով, որոնք հիմնվում են ընդօրինակող երկրների համեմատական առավելությունների վրա, առավելագույն շահույթ ստանալու նպատակով: Եվ թեև պետությունները ևս ստանում են մեծ օգուտներ ներդրողների կողմից ընտրած ոլորտներում կատարված կապիտալ ներդրումներից, այդ թվում և բարձր տեխնոլոգիաների ոլորտում (եյթ դեպի շուկա, տեխնոլոգիաների փոխանցում մասնաճյուղերին և անհրաժեշտ պոտենցիալի կուտակում, մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշների լավացում, ինչպիսին են թողարկված արտադրանքի ծավալները, արտահանումը, զբաղվածությունը), սակայն երկարաժամկետ հեռանկարում մնան գործունեությունը չի խոստանում բարձր ցուցանիշների պահպանում հետևյալ պատճառներով.

- օտարերկրյա և ազգային հատվածները թույլ են ինտեգրված, ԿԱԵ երկրների սեփական արտադրությունը բավականին հետ է մնում արդյունավետության, ապրանքի որակի և վճարվող աշխատավարձի ցուցանիշներով օտարերկրյա կապիտալով աշխատող առևտրային կազմակերպություններից: Արդյունքում ՀՆԱ-ի աճը ապահովվում է հիմնականում օտարերկրյա ներդրողների միջոցով, որոնք տվյալ երկրներում սկսում են իրականացնել առևտրային գործունեություն: Ինչ վերաբերում է ավանդական, ցածր եկամտաբերություն ունեցող ոլորտներին, ապա դրանք գտնվում են օտարերկրյա ներդրողների ուշադրությունից դուրս, լավագույն դեպքում մնան ոլորտների կատարելագործման համար նրանք օգտագործում են ԵՄ-ի տարբեր հիմնադրամներից ստացված գումարներ կամ միջազգային ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերը,
- ԿԱԵ երկրների արդյունաբերության ոլորտները ավելի շատ ձգտում են մի տեսակի ապրանքի արտադրմանը: Այսպես, մի քանի երկրներում ավտոմոբիլային արդյունաբերության արտադրանքի բաժինը ընդհանուր արտադրության և արտահանման մեջ կազմում է 10% (Սլովակիայում ավտոմեքենա-

¹⁰ Власкин Г.А., Ленчук Е.Б. "Промышленная политика в условиях перехода к инновационной экономике", М., Наука, 2006, стр. 59

շինական արտադրանքի 3/4 մասը արտահանվում է), խոշոր մայր ընկերությունների ֆինանսական վիճակի վատացումը բացասաբար է ազդում ԿԱԵ երկրներում գտնվող իրենց ձեռնարկությունների վրա,

- ԿԱԵ երկրներում ներդրումներ իրականացնող օտարերկրյա ընկերությունները, որպես կանոն որևէ պարտավորություն չեն կրում այն երկրների հանդեպ որտեղ իրականացնում են ներդրումներ,
- չնայած արտահանման աճող տեմպերին, վերջին տարիներին ԿԱԵ երկրներում վատացել է արտաքին առևտրի հաշվեկշիռը: Դա բացատրվում է կատարելագործման մոդելի ներդրումների մեծ ծավալով, որն իրականացվում է ՎԱԿ-երի կողմից,
- ՎԱԿ-երի գործունեության արդյունքում տեղի է ունենում ազգային տեխնոլոգիական համակարգի հաջորդական փոփոխություն, դարձնելով ԿԱԵ երկրները Արևմտյան, մասնավորապես, արևմտաեվրոպական երկրների տեխնոլոգիական համակարգի մասնիկ: Առևտրային կազմակերպությունները սկսել են ընտրել նորարարությունների օտարերկրյա աղբյուրներ, և հնացած ազգային ռեսուրսները դարձել են անհետաքրքիր¹¹:

Այս իրավիճակում ԿԱԵ երկրներում գիտության ոլորտը գրեթե անուշադրության է մատնված: Համարյա ամբողջապես քայքայվել է առևտրային կազմակերպությունների մակարդակով գիտահետազոտական գործունեությունը: Ընդհանուր առմամբ ԿԱԵ երկրները հետադարձաբանական վերափոխումների ժամանակ կորցրել են գիտական կադրերի 1/2 -ից 3/4 -ը¹²:

Ըստ օտարերկրյա վերլուծաբանների, «ազգային նորարարական համակարգերի հետագա բուլացումը անխուսափելիորեն կբերի ԿԱԵ երկրներում արդյունաբերության կատարելագործման հեռանկարների դադարեցմանը, որն իրականացվում է ՕՈՒՆ-երից տարբեր այլ միջոցներով»¹³:

ԱՐՄԵՆ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Բորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հետխորհրդային երկրների և, մասնավորապես, Հայաստանի տնտեսության զարգացման ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով: ԽՍՀՄ փլուզումը բաժանեց երբեմնի միասնական տնտեսական գոտին, որի արդյունքում նորանկախ պետությունների առջև ծառացավ ազգային տնտեսական համակարգի ձևավորման խնդիրը:

Վերարտադրման խորհրդային մոդելը, որը դրված էր մաս մեր հանրապետության տնտեսության հիմքում ցույց տվեց, որ այն ի գործու չէ ապահովել տնտեսության նորարարական վարքը, որը կխթաներ ձևավորելու արտադրության նոր տեխնոլոգիական հենք և որը հագեցած կլիներ ժամանակակից տեխնոլոգիաներով: Այսպես, ըստ 1980-ականների վերջին իրականացված հաշվարկների, ԽՍՀՄ արդյունաբերության մի շարք ոլորտներ, եթե ըստ տեխնոլոգիական զարգացվածության 1950թ. հետ էին մնում զարգացած երկրներից 10-15 տարի, ապա 1980թ.՝ 20-30 տարի, ինչը բնութագրական է մաս Հայաստանի համար¹:

Անցումային ճգնաժամը պատեց բոլոր այն ոլորտները, որոնք կրում էին առաջատար տեխնոլոգիաներ: Եթե համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացի առաջատար երկրների հինգերորդ տեխնոլոգիական մակարդակը կազմում է ՀՆԱ-ի կեսը, ապա ԱՊՀ երկրներում այդ մակարդակի չափը ՀՆԱ-ում կամ բացակայում է, կամ էլ, եթե կա ապա շատ փոքր քանակությամբ, իսկ գերիշխող տեխնոլոգիական մակարդակներն են համարվում երկրորդը և երրորդը:

Շուկայական վերափոխումների տարիներին այդ երկրների գիտատեխնիկական պոտենցիալը ոչ միայն չի բարձրացվել, այլ մաս այն ենթարկվել է բավականին ավերիչ գործընթացների, որն արդյունքում գրկել է ԱՊՀ երկրներին, մասնավորապես Հայաստանին, սեփական արտադրատեխնոլոգիական խնդիրները լուծելու հնարավորությունից:

Հայաստանի և ԱՊՀ մի շարք երկրների գիտահետազոտական ինստիտուտների և կազմակերպությունների արտադրատեխնոլոգիական շղթայի խզումը դարձրեց նրանց աշխատանքը ավելորդ, քանի որ նրա մշակումների նկատմամբ չկար պահանջարկ: Այնուամենայնիվ, անկախության ձեռք բերման առաջին տասնամյակում ԱՊՀ և ոչ մի պետության մեջ չի նկատվել պետական լուրջ միջամտություն հարմարեցնելու սեփական գիտատեխնիկական պոտենցիալը տնտեսական զարգացման համար անհրաժեշտ խնդիրների լուծման համար: ԱՊՀ երկրներում գործնականում բացակայում է երկարաժամկետ հեռանկարի համար հաշվարկված գիտատեխնիկական և նորարարական քաղաքականությունը:

ԱՊՀ երկրներում առաջ եկած ֆինանսական ճգնաժամը և տնտեսական աճի տեմպերի նվազումը իր հետ բերեց պետության կողմից ԳՀՓԿԱ-ի վրա կատարվող ծախսերի նվազում: Հարկ է նշել, որ վերջին տասն տարիներին զարգացած երկրներում պետության կողմից գիտության վրա կատարված ծախսերը ՀՆԱ-ում

¹¹ Бойко И.В. Фундаментальные основы , нновац, онной . коном, к. . М., т005, стр.т41

¹² Современна Европа. т004. Nт, стр т7

¹³ McGowan F., Radosevic S., Tunzelman von N. Network alignment and pan European industry networks: conclusions, contributions and policy implications // The Emerging Industrial Structure of the Wider Europe. L., 2004 P.250

¹ Глазьев С.Ю. Вл, н, е . коном, ческой реформы на науку ыНаука на пороге рынка. М., 199т, с.51